ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 9
հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքը (բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ

(Արտաշատ համայնքի (բնակավայրի) գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 54-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքը (բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Արարատ-4 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝

ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի (բնակավայրի) Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
0154 թաղամասից՝ 0.07909 հա մակերեսով հատուկ նշանակության հողամաս	0154 թաղամասից՝ 0.07909 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության՝ հասարակական կառուցապատման հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Արտաշատ համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել համայնքի (բնակավայրի) ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի (բնակավայրի) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ա.Ղուլարյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Հ.Դավթյան

Երևան, «13» «հունվարի» 2022թ.